ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի մ 2018թ. հունվարի 24-ի № 3 նիստիորոշու

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ » ՊՈԱԿ-ի ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ

ՏԱՐԵԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ՝ ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը որոշում է.

1.Հաստատել ՀՀ ԿԳՆ « Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի դասախոսների տարեկան անհատական ծանրաբեռնվածության կազմման ընթացակարգը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ՀՀ ԿԳՆ « Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի նախագահ՝ Ա. Թ. Գրիգորյան

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի որոշում 2020թ. հունվարի 13-ի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ » ՊՈԱԿ-ի ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը որոշում է.

1.Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ « Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի դասախոսների տարեկան անհատական ծանրաբեռնվածության կազմման ընթացակարգը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ՀՀ ԿԳՄՄՆ « Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի նախագահ՝ Ա. Թ. Գրիգորյան

Հաստատում եմ՝ ՀՀ ԿԳՆ
«Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
տնօրեն---------- Է.Գ.Գասպարյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի դասախոսների

տարեկան անհատական ծանրաբեռնվածության :

I.Ընդհանուր դրույթներ

1. Սույն աշխատակարգը սահմանվում է ՀՀ ԿԳՆ « Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի դասախոսների տարեկան անհատական ծանրաբեռնվածության (այսուհետ՝ ծանրաբեռնվածություն) կազմման, իրականացման աշխատակարգը:

2.Սույն աշխատակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են տարիֆիկացիոն հանձնաժողովի, ապա՝ մանկավարժական խորհրդի կողմից:

II. Ծանրաբեռնվածության կազմման աշխատակարգը

1.Ծանրաբեռնվածությունը կազմելիս հաշվի է առնվում դասախոսի պաշտոնը, որակավորումը:
2. Ծանրաբեռնվածությունը կազմելիս հաշվի է առնվում դասախոսի կրթությունը և կրթության վերաբերկյալ փաստաթղթի տվյալները (դիպլոմի համարը, որտեղ և որ թվականին է ավարտել):
3.Ծանրաբեռնվածությունը կազմելիս հաշվի է առնվում դասախոսի աշխատանքային ստաժը:
4.Հաշվի է առնվում տարիֆի չափը՝ 720 ժամ (10 ամսվա կտրվածքով) :Նշվում է նաև ժամավճարի չափը:
5.Առանձին նշվում է ամբողջ տարեկան ծանրաբեռնվածությունը՝ ըստ ընդհանուր ժամաքանակի (միջին մասնագիտական կրթական համակարգի համար), իսկ նախնական (արհեստագործական) կրթական համակարգի դեպքում՝ նաև շաբաթական ժամերը:
6. Ներկայացվում է ամսական միջին աշխատավարձը (հասանելիք աշխատավարձը): Անհրաժեշտության դեպքում նշվում է նաև գրավոր աշխատանքների տրման ու ստուգմանը հատկացվող վճարման չափը:
7.Գրավոր աշխատանքների վճարման հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ. Տվյալ առարկային հատկացված ժամերի թիվը գումարվում և բաժանվում է 5-ի (լեզուների և մաթեմատիկայի համար .հատկացված ժամերի 5%-ը.):Հիմք՝ կառավարման խորհրդի 2019թ. ապրիլի 4-ի № 4 նիստի որոշումը:
8.Վերջնական կազմված ծանրաբեռնվածությունը ներկայացվում է հաստատության տնօրենին ՝ հաստատման:

Տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով՝ Ս. Հայկյան